

**ԱՆԱՊԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ**

**ՄԱՍՆ Բ.**

Գոչեմք առ ձեզ սուրբ Նահատակք,  
Հողանութեայ մաքմնով հրեշտակք,  
Մարտիրամք սուրբք և վկայք՝  
Որք սրոյ մահուամք կատարեցայք,  
Յորդոր աօնիս ձեր լիշտակ,  
Արեան սրբոյ հեղման վտուկք  
Առ Տէր լիցի սուրբ պատարագ  
Պահել զմեզ միշտ անվտանգ:

Շարական եօրն խոտանարակաց.

**Ա.**

Անապատականները ու վաճականութիւնը Հայաստանում: Ա. Ասկեանն է Սուբիասեանն. Եկեղեցական աւանդութիւնը նրանց մասին: Նրանց բնակործեան վայրերը—Ծաղկեոյ է Սուկաւ—Սուկուէս լեռները: Ասկեանն է Սուբիասանց ժամանակի մասին տարակոյսներ: Ասկեանն է Սուբիասանց հաւանական ժամանակը: Ասկեանն է Սուբիասանց վկայաբանութիւն աւանդողները: Ե՞րբ էին ապրում Ասկեանն է Սուբիասանց ժամանակ յիշուած քագաւորները:

Մեր սուրբ Եկեղեցու աւանդութեամք խոտաճարակ ճգնաւորական կեանքը Հայաստանում՝ սկսուած է Քրիստոսի հէնց առաջին դարում: Ահա այդ աւանդութիւնը, Հռովմայեցւոց տէրութիւնը Հայոց Սանատրուկի թագաւորի մօտ ուղարկում է հինգ հոգուց բաղկացած մի գեսապանութիւն՝ որի գլխաւորի անունն էր Խրիւսի կամ Խուռասի, որ հայերէն Ասկի է նշանակում: Ա. Թագէոս առաքեալլ Կապագովիկայից Միջագետք գալիս՝ հանդիպում է այդ գեսապանութեանը, Խրիւսին և իւր ընկերները, լսելով ս. առաքեալի քարոզութիւնը, քը իստոնեայ են դառնում: թողնում են իրանց դեսպանութեան պաշտօնը.

վաճառում են իրանց բոլոր դոյքերը և բաժանում աղքատներին. մկրտում ու հետեւում են ո. առաքեալին և իրանք էլ սկսում քարոզել քրիստոնէական հաւատը. Ուսկին կամ Խրիւսին էլ քահանայ է ձեռնադրում ո. առաքեալից: Այս դէպքը պատահեց 46 թուին: Այսպէս է համառօտում Ոսկեանց մասին աւանդութիւնը Հ. Միք. Չամչեանը<sup>1)</sup> աղբիւր ունենալով «ճառ ընտ», օգոստ. 27. սեպտեմբ. 19. Յովհ. կաթ.»: Հ. Մկրտիչ Աւգերեանը դրում է. 2) «Այս երանելիքս էին անձինք աղնուականք և արքունի պաշտօնեայք ի կայսերական պալատան. աղգաւ հոռմը կամ հոռոմք, այսինքն է հոռվմայեցիք, առաքեալք յինքնակալէն Հռովմայ ի հայս առ Սանատրուկ արքայ, ոգիք հինգ, որոց գլխաւորի անունն էր Խորիսի կամ Քորիսի: Այնուհետեւ վկայաբանօրէն պատմում է դեսպանութեան հանդիպումն Ա. Թագէոս առաքեալին Հայաստանի սահմանի մի լեռնադաշտում, առաքեալի հրաշքները, դեսպանութեան հաւատալն, մկրտուիլը, Խռուսու կամ Ոսկու քահանայ ձեռնադրուելը, նրա անունով էլ նրա ընկերների Ոսկեանք կոչուելը, ո. առաքեալի հետ քարոզութեամբ Հայաստանում շրջելը և ո. առաքեալի նահատակուելուց յետոյ մեկուսանալն ու առանձին ընակուիլը, «քանզի շինեալ իւրաքանչիւր խրճիթս՝ կրօնաւորեցան ի լերինս ուրեք ծմակայինս, յակունս Եփրատայ, ի խառնուրդս ձորոց, որը միանան ի լեառն Ծաղկէոյ, ի գաւառն, որ կոչեցաւ Ծաղկոան. վասն գոլոյ լերանց և դաշտաց ծաղկաւէտ և զուարճալի վայելլութեամբ զարդարեալ» (Եր. 124): Ոսկեանը իրանց առանձնանալու 43 տարին, Արտաշէսի թագաւորութեան ժամանակ գնացին արքունիք, քարոզեցին արքունիքում. Սաթենիկ թագուհու ալան աղգաւականները, թուով 18 կամ 19 հոդի, Ոսկեանց հետեւելով՝ հաւատացին և մկրտուեցին Եփրատ դետի ակռնքում. մկրտութեան

1), Պատմ. Հայոց ապ. Վ. Ենետ. 1784, հատ. Ա. Եր. 296:

2), Լիակատար Վարք և Վկայաբանութիւն Սրբոց, հատ. Բ. 1811 թ. Վ. Ենետ. Եր. 121—130:

Ժամանակ՝ նրանց գլխաւորի անունը՝ Առքիաս վոխուեց, ուստի և մնացածներն էլ նրա անունով Առքիասանք կոչուեցին. Ա. Ոսկեանք Փրկչի 107 թուին նահատակուեցին Արտաշէսի որդիներից, իբրև նրանց մօր ազգականների մոլորեցուցիչ:

Հ. Աւգերեանը Ա. Ոսկեանց վկայաբանութեանը կցած ծանօթութիւնների մէջ յայտնում է<sup>1)</sup> ա. որ միայն Ոսկին էր քահանայ ձեռնադրուած, իսկ նրա ընկերները սոսկ կրօնաւորներ էին. բ. Քոփուսին կամ Ոսկին, յունաց պատմիչներից տանելով՝ կոչուել է «այր յազդէ գոփիկ, այսինքն կոէգոս, որ է Հոռոմ»: գ. Որ Ա. Ոսկեանք ճգնում էին Եփրատի ծմակային ակունքում Ծաղկոտն գաւառում, իսկ Սուրբիասանը մի առ ժամանակ Ոսկեանց ճգնարանում ընակուելուց յետոյ գնացին Զրաբաշխ լեռը, որ Սուկաւէտ է կոչում: Ուրեմն ըստ Աւգերանի՝ Ծաղկոտն գաւառի Ծաղկէոյ լեռն, որ այժմ Ալադաղ է կոչում, ջոկար է. Սուկաւէտը կամ այժմեան Քեօսադաղը ջոկ:

Ցովհաննէս կաթուղիկոսը<sup>2)</sup> Ոսկեանց մասին այնքան գիտէ, որ նրանք ո. Թագէոս առաքեալի աշակերտներից էին, ընակում էին Եփրատ գետի ակունքում և, աշակերտեալ միրտէին զարս ոմանս յալանաց ի հարազատութենէ Սաթենկայ տիկնոջ, որ էր կին Արտաշիսին: Սաթենկայ որդիքն էլ զայրացած՝ սրով սպանում են Ոսկուն նրա սուրբը ընկերներով, Ցովհաննէս կաթուղիկոսը չի յիշում, որ Ոսկեանք հոռոմ գեսպաններ են, Ոսկին Խոփուսու հայ թարգմանութիւն է ևլն:

Սոփերք հայկականքը<sup>3)</sup> գիտէ, որ Ոսկեանց գլխաւորի անունը Խոփուի էր, այս յազդէ գոփիկ. Սոփերքի հրատարակիչը մի այլ ձեռագրի մէջ դոփիկը գոեհիկ է կարգացել, սակայն Հ. Աւգերեանի ծանօթութեան համեմատեթէ գոփիկը կոէգոս հասկանանք, պէտք է գոփիկ կամ լաւ-

1) Վարք սրբոց հատ. Բ. եր. 128—130.

2) Ցովհ. կթղկս. առաջ Ցերուսաղէմ, 1813 թ. եր. 24.

3) Սոփերք Հայկականք Ժ. Վեհակ. 1854. եր. 59—66.

ևս գոեկ սրբագրենք։ Սովերքը չէ յիշում Ոսկեանց գեռապանութեամբ Հայաստան գալը. միւս կէտերում համանման է Վարք Սրբոցին, կամ լաւ ևս, նրա ազրիւրներից մէկն է։ Ոսկեանց բնակավայրի մասին Սովերքը ասում է, «Ենտ մահուան առաքելոցն երթեալ կրօնաւորեցան ի լերինս ուրեմն ծմակայինս, յակունս եփրատայ ի խառնուածս ձորոյ ուրեմն, որ սկիզբն առեալ իջանեն, որ կոչի Ծաղկէ, յորոյ անուն և շէնքն կոչի մինչև ցայսօր Ուն Ծաղկոյ»։

Յայսմաւուրքը<sup>1)</sup> չէ յիշում Ոսկեանց գեսպան լինելը. դիտէ, որ Ոսկեանց գլխաւորի անունն էր «Խոռուսի», որ թարգմանի Ոսկի», այլ կէտերում շատ համառօտ աւանդում է այն՝ ինչ որ Վարք Սրբոցը, և Սովերքը։

Եկեղեցին սրբագործում է Ոսկեանց և Սուքիասանց մասին աւանդութիւնը նոցանուիրուած շարականների մէջ, առաջններին անուանելով Ա. Թադէոսի և երկրորդներին՝ Ա. Ոսկեանց աշակերտ։

Յայսմաւուրքի, Վարք Սրբոցի, Սովերքի և Յովհաննէս կաթողիկոսի համեմատ Ոսկեանց նահատակել են Արտաշէս թագաւորի որդիքը, համարելով նրանց մոլորեցուցիչ իրանց մօր հարազատ Սուքիասեանների։

Մեր պատմիչների մէջ, բացի Փ. դարի պատմիչ Յովհաննէս կաթուղիկոսից, Ոսկեանց մասին անորոշ յիշատակութիւն գտնում ենք միայն Դ. դարում. Փաւստոս Բիւզանդն ասում է<sup>2)</sup>... ուր (յակունս եփրատայ) յառաջու կայեանքն էին Մեծին Գրիգորի առաջնոյ, որում տեղեացն Ոսկիք կոչեն։ Մեր միւս պատմիչները Ե. Փ. դար Ոսկեանց մասին ոչինչ չեն գրում. Ոսկեանց վկայաբանութեան սկզբնական ազրիւրը ինչպէս գրում է Հ. Ա., Աւդերեան<sup>3)</sup>. (Վենետիկի մատենադարանի) Բ, ճառընտրի

1) Սեպտ. Փթ. և Հոռի Փ.

2) Փաւստոս Բիւզանդ Վենետ. 1889. դպե. Ե. (Ղ.) գլ. ՓԶ.

3) Վարք Սրբոց Բ. հատ. 2-րդ ծանօթ. Վկայաբանութեան Ա. Ոսկեանց, եր. 128,

Զի՞ն. Երեսի յառաջարանն է, ուր ասուած է թէ, յունաց կողմերում՝ Վաղենտիոս կայսրի ժամանակ, եղել է մի ընթերցասէր մարդ Տատիանոս անունով, որ յունաց մատեաններից շատ բան է պատմել, որի գրքերը անթիւ շատաբան զբոյցներով մեր մէջ գտնւում են, որը շատ անգամ է կարդացել, գտել է այնտեղ Ոսկեանց պատմութիւնը:

Հ. Մ. Աւգերեանը ասում է, որ Տատիանոսի գրածները, բացի նրա վիճարանութիւններից ընդդէմ հեթանոսաց, չը կան ոչ հայերէն ոչ յունարէն և ոչ լատիներէն: Ուրեմն Ոսկեանց վկայաբանութեան իսկական ազբիւրը չը կայ:

Ուրեմն ամենահին յիշատակութիւնը Ոսկեանց մասին, ինչպէս ասացինք, տալիս է Դ. դարի վերջին քառորդին ապրող Փաւստոս Բիւզանդը, և այն՝ ոչ օրպէս մարդկանց անուն, այլ տեղի, ըստ այսմ, «Որում տեղեանց ոսկիք կոչենու Փաւստոս»: Հիշում Ոսկեանց գեսպան լինելն ու Ս. Թաղէսս առաքեալից մկրտուելը: Ուրեմն Դ. դարում Ոսկեանց մասին այս աւանդութիւնը դեռ չէր կազմուել, այդ ժամանակ կար մի վայր, ուր յառաջու կայեանքն էին Մեծին Գրիգորի առաջնոյ, որում տեղեացն Ոսկիք կոչենու: Փաւստոս, որ ուրիշ դէպքերում շատ մանրապատում է, եթէ ձեռքի տակ ունենար Ոսկեանց մասին աւանդութիւնը, անշուշտ գլուխներ կը նուիրէր Ոսկեանց:

Մեր այս տեսութեան Դ. դլխում տեսանք, որ Միջագետքում Դ. դարում զարգացած էր անապատականների մի կարգ, որ խստակեցութեան ծայրահեղ աստիճաններում անապատների խորին առանձնութեան մէջ անասունների պէս խոտ էր ճարակում և այդ կարգի անապատականները ամառ ձմեռ մերկ էին բոլորովին: Միջագետքի այդ խոտաճարակները կոչում էին Ոսկի<sup>1</sup>), մեր աղդային պատմութիւնից<sup>2</sup>) գիտենք, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչը Դ. դարի սկզբում կեսարիայում ձեռնադրու-

1) Իստ. Հրիստ. պերք. հատ. I. եր. 319.

2) Հ. Մ. Չամչ. պատմ. Հայոց հատ. II. գիրք Բ. զւ. 1, 9.

թիւն ստանալուց յետոյ, Հայաստան վերադառնալիս, Փոքր Ասիայից և յատկապէս Մերաստիայից հետը բազմաթիւ յոն և առորի կրօնաւորները բերեց, որոնց գլխաւորներն կոչում էին Անտոն և Կրօնիդէս։ Մեր Եկեղեցական աւանդութիւնը<sup>1)</sup>, Անտոնին ու Կրօնիդէսին տօնում է Եկեղեցում տօնւող Եօթն Խոտաճարակիների շարքում։ Հաւանական է, որ Միջադետքից Եկած Խոտաճարակ կրօնաւորները հետները բերին իրանց, արդէն յայտնի, Ուկի կոչումն»

Եփրատի ակունքը, «որ ըստ Փաւստոսի յառաջու կայեանըն էին մեծին Դրիգորի առաջնոյ, Խոտաճարակիների առաջին ճգնավայրն էր, և այնտեղ բնակուող խոտաճարակների կամ Ուկիների անունով Ուկին էր կոչում։ Ա. Լուսաւորիչը յաճախ անապատ էր գնում առանձնութեան մէջ, աշխարհի հոգսերից հեռու՝ Աստուծուն նուիրելու, այս հանգամանքը այսպէսէ աւանդում Հ. Միք. Չամչեանը՝ «Դ. Յետ պայծառացուցանելոյ Մըքոյն Դրիգորի զհամօրէն Հայաստանեայս աստուածպաշտութեան կարգօք, այնուհետեւ ընդ ժամանակս ժամանակս մեկուսանայր յամբոխէ մարդկան և գնացեալ ի լերինս և յանապատս՝ ճգնէր յազօթս և իպահս մերթ ընկերօք ոմամբք, զորս առնոյր ի մենաստանաց և մերթ լոկ առանձին<sup>2)</sup>», իւր վերջին օրերը խորին անյայտութեան մէջ, Դարանաղեաց լեռների Մանիա այս բում անցկացրեց և անյայտութեան մէջ էլ վախճանուեց<sup>3)</sup>։ Ա. Լուսաւորչի առաջին մեկուսացումների ժամանակ նրա «յառաջու կայեանքն» էին Եփրատի ակունքը, «որում տեղեաց Ուկիք կոչեն, Ծաղկուան գաւառում, իսկ վերջնական մեկուսացման տեղն, Դարանաղիք լեռների Մանիա այլը։ Պատմութիւնից յայտնի է<sup>4)</sup> որ Ա. Տշդատ թագաւորն էլ ձգտում էր կրօնաւորական կեանքի, և այդ զար-

1) Շաբակ, Եօթն Խոտաճարակաց, (ահս ի շաբս յատուկ մանկանց)։

2) Հ. Միք. Չամչէ պատմ. Հայոց հատ. Ա. դիքք. Բ. դիքք. Վ. դիքք. Ե. դ. եր. 398։

3) Խորենացի գելք Բ. դիքք. Վ. դիքք.

4) Խորեն, գելք. Բ. դիքք. Վ. դիքք.

մանալի չէ. նրանք կարող են նորահաւատներին յատուկ խոտակրօնութեամբ ծայրայեզրութեան մէջ ընկնել:

Անապատական և կրօնաւորական կեանքի զարդացման պատմութեան մէջ տեսանք, որ անապատականութիւնը քրիստոնէական եկեղեցում զարդացաւ երրորդ դարում. Դ. դարի սկզբում արդէն առաջ են գալիս վանական կրօնաւորներ և խոտաճարակներ։ Եթէ Ոսկիք խոտաճարակ էին, ուրեմն պէտք է Դ. դարում, առ առաւելն Պ. դարի վերջին քառորդին ապրէին Բայի այս, Ոսկեանց վկայաբանութեան մէջ յիշած թագաւորների անունները պատմութեամբ չը վերստուգուելով ժամանակագրական անհետեթութիւն են առաջացնում, որով հարկ է լինում նրանց կեանքը մօտ 250 տարի երկարացնել, կամ թագաւորների անունները սրբագրել:

Մենք կարծում ենք, որ ժամանակի ընթացքում, մինչև աւանդութեան առաջ գալն ու վկայաբանութեան կազմուելը պատմական իրողութիւնը անփոփոխ մնալով, ժամանակն ու մարդկանց անունները մոռացուել ու շփոթուել են. պատմական իրողութիւնը աւանդութեան կարգն է անցել, և սերնդից սերունդ անցնելով կազմուել է Ոսկեանց և Սուրբասանց մասին զրոյցը։ — Միջագետքից եկած Ոսկի խոտաճարակները դարձել են Հռովմի դեսպան Թրիւսի, Ս. Լուսաւորչի տեղ՝ դրուել է Ս. Թաղէսս առաքեալի անունը. իսկ ժամանակը Պ. դարից տեղափոխուել է Ա. դար, Այս աւանդութեան համեմատ էլ կազմուել է Ոսկեանց և Սուրբասանց վկայաբանութիւնը։ Իսկ ով է վկայաբանութեան հեղինակը։ Խնչպէս տեսանք, ճառընտիրները ասում են յոյն Տատիանոսն է, որ ապրում էր Վաղենտիանոսի ժամանակ։ Երկու Վաղենտիանոսներ կան. մէկը թագաւորում էր 375—392 թիւը Պ. դարի վերջին. իսկ միւսը 423—455 թ. ե. դարի Ա. կէսում. այս կայսրներից որի ժամանակ էլ որ ապրէր Տատիանոսը, Ս. Թաղէսս առաքեալի ժամանակ պատահած գէպքերի ականատես չէ, եթէ երբէք դրել է նա Ոսկեանց վկայաբանութիւնը յունարէն, որ կասկածելի է, նա գրել է աւան-

դութիւնը և ժողովրդական զրոյցները աղքիւր ունենալով։ Ով և լինի Ոսկեանց վկայաբանութիւն կազմողը, նա այդ վկայաբանութիւնը կազմելիս նպատակ է ունեցել Ոսկեանց անպատճառ դարձնել առաքեալների ժամանակակից, տալ նրանց աղնուական ծագումն՝ անուանելով դեսպան, և նրանց աւելի կարեւորութիւն տալու համար անուանել յոյն։ և այս այն պատճառով՝ որ Հայաստանի կրօնաւորութիւնը սկզբնաւորած համարի առաքեալների ժամանակից ու նրան խորհրդաւորութիւն տայ սկզբնապատճառների աղնուական և յոյն ծագմամբ Խրիւսի-Ոսկի անուով դեսպանութիւնից խոտաճարակ դարձած ու Ս. Թաղէոս առաքեալի ձեռքով մկրտուած՝ քննելի է։ խոտաճարակ Ոսկեանք Դ. դարում Ս. Լուսաւորչի օրով Հայաստան եկած Միջագետքից՝ պատմական իրողութիւն է, համաձայն պատմական անցքերին թէ ընդհանուր քրիստոնէական եկեղեցու պատմութեամբ և թէ մեր ազգային Եկեղեցական աւանդութեան համեմատ<sup>1)</sup>։ Ս. Թաղէոս առաքեալի աշակերտ Ոսկին իւր ընկերների հետ բնակւում էր Ծաղկէոյ սարում, Եփրատի ակունքում «առանձին կեանս ստացեալ»։ Նրանք Արտաշէսի թագաւորութեան ժամանակ եկան արքունիք և սկսեցին քարոզել Քրիստոսի վարդապետութիւնը Արտաշէսին ու նրա Սաթենիկ տիկնոջը, որ Ալանաց ազգից էր։ Պատուաւոր մարդկանցից ոմանք, որոնք թագուհու հետ Ալանաց երկրից եկել էին, հաւատացին Քրիստոսին ու մկրտուեցին, և հեռանալով արքունիքից, Բագրեանդ գիւղի յանդիման, նպատարի դէմ ու դէմը, Սուկաւ սարում ապրեցին «խոտաճարակ իբրև զվայրենի գօշ» ամս բազումու եւ եղև մորթնոցա իբրև զմամուռ քարի ի խստութենէ օդոցն, աճեալ հերքն ծածկէին զամենայն մարմինս նոցա։ Արանց գլխաւորի անունն էր Բարաքաթրայ, որ մկրտութեան ժամա-

1) Յայսմաւուրք Օգոստոսի Խէ. և նաւասարդի Ժէ։ Վկայաբանութիւն Արբոց Սուքիասանցն, որը վկայեցին ի Բագրեանդ գառտի. ի Սուկաւէտ լերինն և են թուակ երեքհարիւր վաթսուն և չորս

նակ Սուքիաս կամ Սիւքիաս վոյխուեց, և այդ անունով էլ նրանք կոչուեցին Սուքիասանք: (Նրանցից մէկի անունն էլ Մեմաս էր, որի անունով է թերեւ Երասխաձորի Վարդի հէր ուխտատեղուց դէպ հարաւ արեելք բարձրացող սարը Մամաս կոչում: Վարդի հէրի ուխտաւորները որպէս ուխտ բարձանում են այս սարի կատարը, որտեղից ընդարձակ հորիզոն է բացւում չորս կողմը և յատկապէս դէպի Բագրեանդ):

Ա. Սուքիասանք իրանց ճգնութեան 44-րդ տարին նահատակուեցին և նրանց նահատակութեան հանգամանքը այսպէս է պատմում Յայսմաւուրքը, Ալանաց Գորգիանոս թագաւորը իւր զօրքերը զերստուգելիս՝ Սուքիասանց չը գտնելով իրանց պատուին յատկացուած Ավայի երկրորդ դական դահում՝ հարց ու փորձ արեց և խմանալով, որ Հայոց երկրումն են ու քրիստոնեայ են դարձել, իւր Բառլահայ զօրապետին ուզաւկեց հրաւիրելու, եթէ դան՝ պատուով բերել, եթէ չը դան՝ սպանել: Սուքիասանք հաստատ մնալով իրանց քրիստոնէական հաւատին, նահատակուեցին նաւասարդի Ժէ.-ին. «Եւ բղխեաց աղքիւր ի տեղուջն ի բժշկութիւն ամենայն ցաւոց և ախտից»: Նրանց ընկերներից երկու կրտսերագոյնները նահատակութեան ժամանակ երկիւղից թաք կացան լեռան խորշերում, յետոյ եկան նահատակուածների մարմինները թաղելու, բայց չը գտան: Իրանց թուլամտութեան պատճառով մարտիրոսական պսակից զրկուելուն համար դառն ապաշաւեցին և խստագոյն ճգնութեամբ կատարեցին իրանց կեանքը. նրանց մահից յետոյ նրանց մարմինները թաղեցին անդէորդները:

Յայսմաւուրքը չէ յիշում, որ Սուքիասի անունով լեռը կոչուած լինի Սուկաւ, այլ ընդհակառակն ասում է, որ Սուքիասը իւր ընկերներով ընակուեց Սուկաւ սարում, որպէս թէ այդ սարը մինչև Սուքիասանց այնտեղ ընակուելը Սուկաւ կոչուելիս լինէր:

Սովերք Հայկականքը (ԺԹ.) գլխաւոր կէտերում երկրորդելով Յայսմաւուրքի աւանդածը, աւելացնում է պատմական պարագաներ, վկայաբանական դարձուածներ, հարց

ու պատասխաններ ու աղօթքներ, նաև ասում է, թէ Սուրբիասանք «ընակեցան ի Սուկաւ լերին, որ յանուն գըլխաւորին իւրեանց Սուրբիաս՝ կոչեցաւ Սուկաւ...» խոտաճարակ լինելով իրու զվայրենի ոչխարս ի տեսչութենէն Աստուծոյ, յամա Շապհոյ թագաւորին Եւ քանդի երկիրն Հայոց յետ ամաց աւերեալ լինէր, զի թագաւոր ոչ ունէին, քանդի սպանեալ էր զԱրտաւան որդի Վաղարշու և զՊոռով թագաւորն Հայոց՝ թագաւորին Պարսից...

«Սոփերքը Սուրբիասանց կեանքը Սուկաւ լեռան ճգնաբանում այսպէս է նկարագրում. «Եւ կացեալ սուրբ վկայըն ի լերինն Սուկաւէտ, խոտաճարակը լեակը հրեշտակակրօն վարուք, և մարմինք նոցա էին իբրև զմամուռս քարի, և վարսք նոցա որպէս զքօշից քարշէին. և ովնչ ունէին. այլ յուսովն Աստուծոյ կային և օրհնէին զԱստուածու. Սոփերքը Ս. Սուրբիասանց նահատակութիւնը գնում է Շապուհի մահից յետոյ նրա յաջորդ Դատիանոսի օշով և ասում է, որ Ալանաց թագաւոր Դիգիանոսը ուղարկեց պարսիկ զօրքեր, որոնց զօրավարն էր Բառլահա և սա նահատակել տուեց Ս. Սուրբիասանց. Բառլահայի հարցմանը Սուրբիասը պատասխանում է, «Նիզակակից էի Շապհոյ արքայի», Յայսմաւուրքում չը կայ ոչ Շապուհ և ոչ Դատիանոս. Յայսմաւուրքի Դորգիանոսը գարձել է Դիգիանոս, նահատակութեան համար Ալանաց թագաւորը ուղարկում է պարսիկ զօրք ու զօրապետ, չը կայ և հատուածս, «Նիզակակից էի Շապհոյ արքայի»: Մեմասն էլ Սոփերքում գարձել է Մեմաս:

Շապուհ. Ա. Թագաւորեց 31 տարի 241—272 թ.<sup>1)</sup> ուրեմն, ըստ Սոփերքի Ս. Սուրբիասանց նահատակութիւնը 272 թուից յետոյ է տեղի ունեցել. Շապուհի յաշորդն էլ Որմիզդ էր և ոչ Դատիանոս:

Ցովհաննէս կաթուզիկոսը (եր. 25) հաստատում է Սոփերքի ասածը գրելով. «Եւ վասնդի յետ ամաց բազմաց՝ սպանաւ թագաւորն Հայոց Խոսրով յԱնակայ, և անիշխա-

1). Ասողիկ եր. 358—359, հրատ. Ս. Մալխասիանց Ս. Պ. բուրգ. 1885 թ. ծանօթ. 85. Ներդէկէի ցանկի համեմատ.

նացաւ երկիրս Հայոց։ Ապա Բառլահայ ոմն եկեալ յԱլա-  
նաց գրանէ,... սուր ի վերայ եղեալ կոտորէ»։

Յովհաննէս կաթուղիկոսն է Համառօտել Սովերքի  
աւանդածը թէ Սովերքն է ընդարձակել Յովհաննէս կա-  
թուղիկոսի պատմութիւնը. այս բանը պէտք է ճշդել, որ-  
պէսզի պարզուի Սուրբիասանց, նրանց հետ էլ Ոսկեանց  
վկայաբանութիւնը կազմուելու ժամանակը։

(Կը տարունակուի)

**Յաւսիկ եպս.**

### ԳՈՅՔԻ ՀԱԻԱՌԱՐՈՒԹԻՒՆ

(Նարունակութիւն \*)

**Բ.**

### ՀԵՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՉՄԸ

1. Հին քրիստոնեական կոմմունիզմի արմատները.

Արդէն առացինք, որ նախորդ գլխում նկարագրուած զար-  
դացումը, որ սրբագործուած էր Աթէնքի օրինակով, բոլոր պե-  
տութիւններին և ցեղերին է վերաբերում։

Հոռվմը, աշխարհի կառավարիչը, նոյնպէս չխուսափեց այդ  
վիճակից։ Նրա ներքին անկումը արդէն մօտեցել էր իւր իրա-  
գործման, երբ որ նո իւր արտաքին ոյժի գագաթնակէտին  
հասաւ. նրա թագաւորութիւնը, որ Միջերկրական ծովի շրջա-  
կայ երկրներն էր բռնում, ներկայացնում էր տէրութիւնների  
մի խառնուրդ, որոնք նոյն ճանապարհի վրայ էին գտնուում։  
Նրանցից մի քանիսը, որ տարածուած էին Միջերկրականի  
արևելեան և հարաւային կողմերը, Հռովմից շատ առաջ գնա-

\* Են Արարատ Թիւ ժ.